

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստի

30.03.2015թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Ս.Սահակյանի հանձնարարությամբ նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ տիկին Ն.Մովսիսյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի 8 անդամներ, հարգելի պատճառով բացակայում էին 3 անդամներ:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին „Սեյվ դը չիլդրեն,, միջազգային կազմակերպության «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում՝ զբաղվածության խթանման միջոցով» LIFE ծրագրի տնօրեն Ջինա Սարգիզովան, «Ունիսոն» ՀԿ-ի հանրային կապերի ղեկավար Մարիաննա Չալիկյանը, “Թալին հոյս” ՀԿ-ի նախագահ Անահիտ Աբգարյանը, “Կանթեղ Արագածի” ՀԿ-ի ղեկավար Արսեն Պապիկյանը, “Հայաստանի կույրերի միավորման” Աշտարակի ԿՍԿ վարչության պետ Սերգեյ Այվազյանը, Աշտարակի ՋՏԿ-ի տնօրենի տեղակալ Ջեմմա Սիմոնյանը:

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝

1.Արագածոտնի մարզում 2014-2015թ./առաջին եռամսյակ/ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մեջ ներառելու ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:
/Զեկուցող՝ Գայանե Դանիելյան, մարզային հանձնաժողովի քարտուղար/

2. ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում՝ զբաղվածության խթանման միջոցով» LIFE ծրագրի ներկայացում:
/Զեկուցող՝ Ջինա Սարգիզովա, “Սեյվ դը չիլդրեն” միջազգային կազմակերպության LIFE ծրագրի տնօրեն/

3. «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» LIFE ծրագրի շրջանակներում իրականացվող իրազեկության բարձրացման աշխատանքների մասին:
/Զեկուցող՝ «Ունիսոն» ՀԿ-ի հանրային կապերի ղեկավար Մարիաննա Չալիկյան/

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցողը՝ մարզային հանձնաժողովի քարտուղար Գայանե Դանիելյանը նշեց, որ 2015 թվականից հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման նպատակով օրենքով սահմանված է կազմակերպությունների /անկախ սեփականության ձևից/ համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ /քվոտա/:

ՀՀ Արագածոտնի մարզի զբաղվածության տարածքային 4 կենտրոններում հաշվառված է հաշմանդամություն ունեցող 91 անձ, որոնց մեջ բարձրագույն կրթությամբ՝ 4 անձ:

Աշխատանքի տեղավորման նպատակով զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառվել է 91 անձ, որից 25-ը կանայք են: Աշխատանքի են տեղավորվել ընդամենը 14-ը, որից 10-ը Աշտարակի կույրերի ձեռնարկությունում՝ “Սեյվ դը չիլդրեն” միջազգային կազմակերպության “LIFE” ծրագրի աջակցությամբ: Սեփական գյուղացիական տնտեսություններում պետական աջակցությամբ զբաղված են 19-ը:

Մարզում գործում են արհեստագործական պետական 3 ուսումնարաններ, որտեղ մասնագիտություն է ստանում հաշմանդամություն ունեցող 7 անձ, որոնցից՝ Ապարանում՝ 2, Ծաղկահովիտում՝ 5: Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզում զբաղվում են 8 հասարակական կազմակերպություններ՝ Աշտարակի տարածաշրջանում՝ 5, Ապարանի՝ 1, Թալինի՝ 2: Հասարակական ևս 5 կազմակերպություն աշխատանքներ է իրականացնում հաշմանդամություն ունեցող անձանց, մանկուց հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների անդամներին, հատկապես՝ ծնողներին նրանց իրավունքների մասին իրազեկելու, սոցիալական աջակցության կազմակերպման հարցերով: 2014թ. ընթացքում մարզի հաշմանդամություն ունեցող 3 անձանց գեղանկարների ցուցահանդես է կազմակերպվել Երևանում՝ Վիվասել ՄՏՍ-ի աջակցությամբ: Այս տարի Սյունիքի մարզում գրանցված “Խարիսխ” ՀԿ-ն մարզի “Առաջընթաց” երիտասարդական ՀԿ-ի հետ համագործակցությամբ տեսանյութ են նկարահանել Աշտարակ քաղաքի բնակիչներ, աշխատող և ստեղծագործող հաշմանդամություն ունեցող 2 անձի մասին, որը կցուցադրվի հեռուստատեսությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքում ներգրավելը, նրանց անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդելը, աջակցելը, մասնագիտական աշխատատեղեր ստեղծելը կարևոր խթան է հասարակության մեջ նրանց ինտեգրման համար:

Երկրորդ հարցի շուրջ զեկուցող “Սեյվ դը չիլդրեն” միջազգային կազմակերպության ծրագրի տնօրեն Զինա Սարգիզովան ներկայացրեց ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» LIFE ծրագրի շրջանակներում 2014-15թթ. ընթացքում հանրապետությունում կատարված աշխատանքները, ձեռքբերումները հաշմանդամություն ունեցող անձանց անհատական զարգացման, գնահատման, հմտությունների խթանման, աշխատանքի տեղավորելու, նրանց մասնագիտական կրթության կազմակերպման, զբաղվածության գործակալություններին ցուցաբերած աջակցության, ցուցաբերվող ծառայությունների որակի բարելավման գործում կարևոր ներդրման, հանրային իրազեկության բարձրացման, տեխնիկական զինման ուղղությամբ: Տիկին Սարգիզովան տեղեկացրեց, որ ծրագիրն իրականացվել է 2012 թվականից Երևանում և հանրապետության 4 մարզերում: Ընթացիկ տարում կշարունակեն աջակցել Աշտարակի կույրերի ձեռնարկությանը, մարզի զբաղվածության գործակալություններին, հաշմանդամություն

ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող կառույցների իրազեկվածության բարձրացման հարցում, իրենց ձեռնարկումներով կնպաստեն հաշմանդամների զբաղվածության խնդրի լուծմանը: Ծրագրի անմիջական շահառուներն են 18-64 տարեկան հաշմանդամություն ունեցող անձինք: Նշվեց, որ 2015թ. „Սեյվ դը չիլդրեն” կազմակերպությանը ընձեռվել է հնարավորություն այս հաջողված ծրագիրն ընդլայնելու, որը կընդգրկի Հայաստանի ողջ տարածքը:

Օրակարգի **երրորդ հարցի** մասին զեկուցումով հանդես եկավ «Ունիսոն» ՀԿ-ի հանրային կապերի ղեկավար Մարիաննա Չալիկյանը: Նա ներկայացրեց գովազդային տեսաֆիլմեր հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքում ներառելու ուղղությամբ նախորդ տարվա ընթացքում <<LIFE>> ծրագրի շրջանակներում հանրապետությունում իրականացված աշխատանքների մասին, այդ գործընթացի դրական ազդեցությունը, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների գործունեությունը:

Հանձնաժողովի անդամները տ-ին Զ. Սարգիզովային ուղղեցին ծրագրի արդյունավետության, շարունակականության ապահովման մասին հարցեր, հանդես եկան առաջարկներով:

Հանձնաժողովի նիստն ամփոփեց տիկին **Նունե Մովսիսյանը**: Նա ողջունեց << LIFE >> ծրագրի մեկնարկը Արագածոտնի մարզում, հանձնաժողովի անունից պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել ծրագրի իրականացմանը: Նա ներկայացրեց մարզի հաշմանդամություն ունեցող անձանց թվի, սեռատարիքային կազմի մասին տվյալներ, նրանց աջակցության ուղղությամբ մարզպետարանի ստորաբաժանումների, այլ կառույցների հետ համագործակցությամբ իրականացված աշխատանքները: Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրեց այդ տեղեկատվությունը ըստ համայնքների, հիվանդությունների, զբաղվածության, սեռատարիքային կազմի ճշգրտելու խնդրի վրա: Ընդգծեց, որ հաշմանդամության ոլորտում տարվող սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանը բոլոր բնագավառներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման ու կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանը: Հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու համար միջավայրի մատչելիության ապահովման հետ զուգընթաց կարևոր է նաև լիարժեք կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, հոգեբանական, մասնագիտական վերականգնումը, որը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, զբաղվածության և հասարակական ակտիվության գործընթացին:

Հանձնաժողովը որոշեց.

- Կարևորել հաշմանդամություն ունեցող անձանց ներառելու << LIFE>> ծրագրի շրջանակներում տարվող իրազեկման և մասնագիտական աջակցման աշխատանքներում, այդ նպատակով անհրաժեշտ համագործակցություն ապահովել

մարզի կրթական, հասարակական կազմակերպությունների հետ, խրախուսել սոցիալական գործընկերությամբ իրականացվող աշխատանքները:

- Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական, միջին մասնագիտական կրթական հաստատությունների միջոցով տարածել տեղեկատվություն զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառվելու, տարբեր ծրագրերում ընդգրկվելու նպատակով:
- Դիմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն հաշմանդամություն ունեցող անձանց մասին /ըստ մարզի համայնքների, սեռատարիքային կազմի, հիվանդությունների/ վերլուծական տեղեկատվություն մարզպետարանին տրամադրելու վերաբերյալ:

Հանձնարարությունների կատարման հսկողությունը դնել հանձնաժողովի քարտուղար Գ.Դանիելյանի և մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ.Հակոբյանի վրա:

ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն

ունեցող անձանց հարցերով զբաղվող

հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Քարտուղար՝

Գ.Դանիելյան